ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ 25

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԻ ԼԱՅՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄՇԱԿՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ

ՏԵՍԼԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆ	Ոչ թե կանխատեսելի պարտավորություն և պլան
ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ	Ոչ թե միայն փոփոխություններ պետական կառավարման համակարգում
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՄԻՏՈՒՄ	Ոչ թե միայն բնականոն, իներցիոն լավարկում
«ԿԵՆԴԱՆԻ» ԳՈՐԾԸՆԹԱՑ	Ոչ թե ստատիկ փաստաթուղթ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ	Ոչ թե միայն բարեփոխումներ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆ 2050

ԳԱՂԱՓԱՐ

ՏԵՍԼԱԿԱՆ

2030 | 2040 | 2050

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

2020 - 2030

ԳԱՂԱՓԱՐ

Մեր ազգային արժեքները

Մեր ազգային նպատակները

Հանրային պահանջարկը

Զանգվածային վերափոխման իմաստը

ԳԱՂԱՓԱՐ

Մեր ազգային արժեքները

Մեր ազգային նպատակները

Հանրային պահանջարկը

Զանգվածային վերափոխման իմաստը

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1 **Հայոց պետականությունը,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, հայոց բանակը:

2 Հայ ժողովրդի պատմությունը, բանահյուսությունը. էպոսը, հավատալիքները, լեգենդները, առասպելները:

3 Հայոց լեզուն և գրերը, հայ գրականությունը, ներառյալ թարգմանական գրականությունը, գիտելիքը, գիտությունը:

4 Համահայկական ներուժը, հայկական սփյուռքը:

5 Հայրենիքը, ընտանիքը, **անհատը:**

6 Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Հայ կաթողիկե եկեղեցին, Հայ ավետարանական եկեղեցին. քրիստոնեությունը:

7 Հայ աշուղական, գուսանական, ժողովրդական, դասական, հեղինակային և էստրադային երաժշտությունը, հայկական պարարվեստը, հայկական կերպարվեստը, հայկական բեմարվեստը, հայկական ճարտարապետությունը:

8 Հայրենի բնաշխարհը՝ իր կենսաբազմազանությամբ:

9 Առաջադիմությունը, ազատասիրությունը, ինքնասիրությունը, հյուրասիրությունը, **կրթասիրությունը, աշխատասիրությունը,** օրինապահությունը, հարգանքը և հանդուրժողականությունը ուրիշ մարդկանց, ժողովուրդների, կրոնների նկատմամբ: Եղբայրական զգացմունքները և հարաբերությունները Հայաստանում և Արցախում ապրող ազգային փոքրամասնությունների նկատմամբ և անքակտելի միությունը նրանց հետ՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության և Արցախի քաղաքացիությամբ:

10 Հայկական խոհանոցը, նյութական և ոչ նյութական ժառանգության բոլոր այն նմուշները, որոնք արտահայտում, պատկերում, նկարագրում կամ խորհրդանշում են հայ ժողովրդի՝ վերը նկարագրված ազգային արժեքները:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միակ գործիքը, որ մեզ հնարավորություն է տալիս մեր ճակատագրի վերաբերյալ կայացնել որոշումներ:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միակ գործիքը, որ հնարավորություն է տալիս ճանաչել մեր խնդիրները և գտնել դրանց լուծումները:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԱՆՀԱՏ

Միակ սուբյեկտը, ով ձևավորում է ընտանիք, հանրություն, ժողովուրդ, պետություն:

ԱՇԽԱՏԱՆՔ

Միակ գործիքը, որ հնարավորություն է տալիս իրացնել կուտակված ստեղծարար ներուժը:

ԳԱՂԱՓԱՐ

Մեր ազգային արժեքները

Մեր ազգային նպատակները

Հանրային պահանջարկը

Զանգվածային վերափոխման իմաստը

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1 **Հայկական պետության հավիտենության** համար անհրաժեշտ գաղափարական, անվտանգային, հանրային, քաղաքական, իրավական, տնտեսական, ժողովրդագրական, միջազգային, կրթական, ինտելեկտուալ, մշակութային՝ ինստիտուցիոնալ պայմանների ապահովումը:

2 Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը՝ առանց որևէ սահմանափակման:

3 Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, հետևանքների հաղթահարումը և վերացումը:

4 **Հայաստանի Հանրապետության քաղաքացիների** անվտանգության, բարեկեցության, ազատության և երջանկության, ինչպես նաև հանրահռչակ մյուս իրավունքների ապահովումը և պաշտպանությունը:

5 Օրենքի առաջ բոլորի հավասարությունը, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, հանրային, պետական, տնտեսական կյանքում ներգրավելու կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովումը, իրավունքների պաշտպանության և պարտականությունների կատարման վրա հիմնված ազգային միասնության հաստատումը:

6 **Հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության,** ինքնուրույնության և ինքնիշխանության պահպանումը և զարգացումը, ներառյալ ազգային ինքնության վերականգնումը և զարգացումը ազգային ինքնագիտակցությունից հեռացած և հեռացող հայության շրջանում, և ընդհանրապես՝ հայության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցողների թիվը էականորեն մեծացնելու միջոցով:

7 **Համահայկական ներուժի համախմբումը** ազգային նպատակների իրագործման շուրջ՝ հանուն ազգային արժեքների պահպանման և զարգացման:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական պետության հավիտենականության համար անհրաժեշտ գաղափարական, անվտանգային, հանրային, քաղաքական, իրավական, տնտեսական, ժողովրդագրական, միջազգային, կրթական, ինտելեկտուալ, մշակութային՝ ինստիտուցիոնալ պայմանների ապահովումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգության, բարեկեցության, ազատության և երջանկության ապահովումը և պաշտպանությունը:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՄՈՒՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության, ինքնուրույնության և ինքնիշխանության պահպանումը և զարգացումը, ներառյալ ազգային ինքնության վերականգնումը և զարգացումը ազգային ինքնագիտակցությունից հեռացած և հեռացող հայության շրջանում, հայության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցողների թիվը էականորեն մեծացնելու միջոցով:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ

Համահայկական ներուժի համախմբումը ազգային նպատակների իրագործման շուրջ՝ հանուն ազգային արժեքների պահպանման և զարգացման: Օրենքի և իրավունքի վրա հիմնված ազգային համերաշխության հաստատումը:

ԳԱՂԱՓԱՐ

Մեր ազգային արժեքները

Մեր ազգային նպատակները

Հանրային պահանջարկը

Զանգվածային վերափոխման իմաստը

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ

ՄԵՆՔ ուզում ենք ապրել ԵՐՋԱՆԻԿ մեր կենսական շահերի կենտրոն Հայաստանում, որը կլինի...

ԱՆՎՏԱՆԳ
ԱՐԴԱՐ
ԱԶԱՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ
ԱՌԱՋԱԴԵՄ

ԱՆՎՏԱՆԳ

ԱՐԴԱՐ

ԱԶԱՏ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ

ԱՌԱՋԱԴԵՄ

ԳԱՂԱՓԱՐ

Մեր ազգային արժեքները

Մեր ազգային նպատակները

Հանրային պահանջարկը

Զանգվածային վերափոխման իմաստը

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՄԱՍՏԸ

ՎԵՐԱՓՈԽԵՆՔ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՄԱՍՏԸ

ՎԵՐԱՓՈԽԵՆՔ ՄԵՐ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ

ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՈՐՊԵՍ ՑԱՆԿԱԼԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՈՐՊԵՍ ԳՐԱՎԻՉ ԱՇԽԱՏԱՎԱՅՐ

ՈՐՊԵՍ ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԻՄԱՍՏԸ

ՎԵՐԱՓՈԽԵՆՔ ՀԱՐՅՈՒՐ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ **ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ** ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ

ՈՐՊԵՍ ԳՐԱՎԻՉ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐ

ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ

ՈՐՊԵՍ ՑԱՆԿԱԼԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ

Հայաստանն իմ Զարթոն է

Ժողովուրդն իմ Ընկերությունն է

Կառուցենք Հայաստանը **Նորովի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ
ԿԱԽՎԱԾ Է ՄԵԿ ՄԱՐԴՈՒՑ

**... ԵՎ ԱՅԴ ՄԵԿ ՄԱՐԴԸ
ԴՈՒ՛Ք ԵՍ**

ՏԵՍԼԱԿԱՆ

2030 ..... 2040 2050

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Հայաստանի բնակչությունը հասցնենք առնվազն 5 միլիոնի

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Ստեղծենք 1 500 000 աշխատատեղ

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Հաղթահարենք աղքատությունը աշխատանքով

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

20-ապատկենք Հայաստանի համախառն ներքին արդյունքը

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Յոթնապատկենք միջին աշխատավարձը

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Առողջ ապրելակերպը դարձնենք ազգային հատկանիշ, կյանքի սպասվող տևողությունը հասցնենք 90 տարվա

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

1 շնչի հաշվով ունենանք աշխարհի ամենամարտունակ բանակը

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Ունենանք աշխարհի 10 ամենաարդյունավետ հետախուզական ծառայություններից մեկը

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Սովորելը դարձնենք ազգային կենսակերպ

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Բուհերի միջազգային վարկանիշի առաջին 200-յակում ունենանք առնվազն 3 բուհ

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Հայաստանը դարձնենք բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Ունենանք $10 մլրդ և ավելի արժեքով առնվազն 5 տեխնոլոգիական ընկերություն և առնվազն 10 հազար աշխատող ստարտափ

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Ունենանք առողջ շրջակա միջավայրով, կլիմայադիմակայուն և էներգաարդյունավետ Հայաստան

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Կրկնապատկենք Հայաստանի անտառածածկ տարածքները

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Նվաճենք 25 օլիմպիական ոսկե մեդալ

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Ֆուտբոլի ազգային հավաքականը դարձնենք Եվրոպայի և/կամ աշխարհի առաջնության մեդալակիր

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Նվաճենք շախմատի աշխարհի անհատական չեմպիոնի կոչումը

ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ

Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը հասցնենք տարեկան 15 միլիոնի

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

2020 2025 2030



ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐ

16 մեգանպատակները՝ առաջիկա 10 տարվա ընթացքում իրականացվելիք կարևորագույն համազգային գործերն են, որոնք ունեն.

ԹԻՐԱԽՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ
2025 և 2030 թվականների համար նախատեսված հավակնոտ չափելի թիրախներ		

ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐ

16 մեգանպատակները՝ առաջիկա 10 տարվա ընթացքում իրականացվելիք կարևորագույն համազգային գործերն են, որոնք ունեն.

ԹԻՐԱԽՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԼՈՒԾՈՒՄՆԵՐ
	Կարևորագույն խնդիրներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել թիրախներին հասնելու համար	

ՄԵԳԱՆՊԱՏԱԿՆԵՐ

16 մեգանպատակները՝ առաջիկա 10 տարվա ընթացքում իրականացվելիք կարևորագույն համազգային գործերն են, որոնք ունեն.

ԹԻՐԱԽՆԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ռազմավարական խնդիրների հաղթահարմանն ուղղված կարևորագույն նախագծեր, ծրագրեր, քաղաքականություններ և ինստիտուցիոնալ լուծումներ

ԿԻՐԹ ԵՎ ԿԱՐՈՂՈՒՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴ

01

Գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենանք քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների ու պարտավորությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն:

ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ

02

Ապահովենք անհրաժեշտ և բավարար պայմաններ՝ Հայաստանի կենսական շահերի պաշտպանության, արտաքին ուժերի ռազմական, տեղեկատվական և կիբեր հարձակումների, ինչպես նաև բնածին, տեխնածին և մարդածին աղետների ռիսկերը կանխարգելելու, պատճառած կորուստները նվազեցնելու և արագ վերականգնվելու համար:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

03

Պետական մարմինների գործունեությունը դարձնենք թափանցիկ, հանրամատչելի, արդյունավետ, վերահսկելի և մասնակցային, ինչպես նաև կերտենք նոր ժամանակների՝ նախաձեռնող, արդյունքին միտված, բարեվարքության բարձրագույն նորմերին համապատասխանող, պատասխանատու և արհեստավարժ հանրային ծառայողներ:

ԱՌՈՂՋ ԵՎ ԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴ

04

Ստեղծենք անհրաժեշտ բոլոր պայմաններն առողջ ապրելակերպի, առողջության պահպանման, վերականգնման և արդյունավետ աշխատանքային գործունեության համար, ինչպես նաև ապահովենք պետական ամբողջական և լիարժեք հոգածություն երեխաների և անաշխատունակ խմբերի նկատմամբ:

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԵՎ ԲԱՐԵԿԵՑԻԿ ԸՆՏԱՆԻՔ

05

Երեք և ավելի զավակ ունեցող ընտանիքները դարձնենք համատարած՝ ապահովելով երեխաների բազմակողմանի զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, ինչպես նաև բազմազավակ կանանց և տղամարդկանց աշխատելու և զարգանալու համար հավասար նպաստավոր պայմաններ:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

06

Ապահովենք սահմանադրական ինստիտուտների հավասարակշռված գործունեությունը և համընդհանուր վստահելիությունը, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և օրենքի առաջ բոլորի հավասարությունը՝ հիմնված իրավունքների պաշտպանության և պարտականությունների կատարման համընդհանուր ընկալման և գործածման վրա:

ՄՇԱԿՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

07

Կայացնենք բարձր ավելացված արժեքով, մրցունակ վերջնական արտադրանք և զանգվածային նոր աշխատատեղեր ստեղծող, արտաքին շուկաներում ընդլայնվող և այդ շուկաների փոփոխվող պահանջներին արձագանքող մշակող արդյունաբերություն:

ՄԱՔՈՒՐ ԵՎ ԿԱՆԱՉ ՀԱՅԱՍՏԱՆ

08

Ապահովենք շրջակա միջավայրի համատարած պահպանությունն ու զանգվածային առողջացումը, բնական պաշարների սահմանափակ և պատասխանատու օգտագործումն ու ամբարումը՝ ի շահ ներկա և ապագա սերունդների:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽԵԼԱՄԻՏ ԶԱՐԳԱՑՈՒՄ

09

Շարունակաբար բարձրացնենք կյանքի որակի չափանիշները՝ յուրաքանչյուր բնակավայրի համար ապահովելով «21-րդ դարի» կենսակերպի հնարավորություն՝ ելնելով այն կանխադրույթից, որ գյուղը կամ քաղաքը ոչ թե կոնկրետ տեսակի գործունեությամբ զբաղվելու վայր է, այլ բնակավայր (օրինակ, քաղաքում բնակվողը կարող է զբաղվել գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ գյուղում բնակվողը՝ գիտական):

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

10

Կայացնենք նորարարական, արդյունավետ, բարձր ավելացված արժեք ստեղծող, կայուն զարգացող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող ֆերմերություն:

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՈՒՄ

11

Ապահովենք ավելի ու ավելի մեծ թվով հայերի կապվածությունը Հայաստանի հետ, որը կարտահայտվի ՀՀ քաղաքացիություն, Հայաստանում անշարժ գույք, բիզնես ունենալով, Հայաստանում կրթություն ստանալով:

ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ

12

Հայաստանը դարձնենք համաշխարհային ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների, տվյալների կարևորագույն հանգույց, որն իրար հետ է կապում հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը, ինչպես նաև աշխարհի հայկական համայնքները:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԵՎ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԷՆԵՐԳԻԱ

13

Ապահովենք Հայաստանի էներգետիկ անվտանգությունն ու ինքնաբավությունը, բնակչության և տնտեսության համար էներգիայի կայուն հասանելիությունն ու մատչելիությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի համար անվնաս լինելը:

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻՉ ՀԱՅԱՍՏԱՆ

14

Հայաստանը դարձնենք տեղական և օտարերկրյա ներդրողների համար գրավիչ և հուսալի, տնտեսական կյանքի մասնակիցների համար կանխատեսելի, խաղի հավասար պայմաններ երաշխավորող, տնտեսության կայուն զարգացման համար արդյունավետ կարգավորումներ և հասանելի որակյալ ծառայություններ (այդ թվում՝ ֆինանսական) առաջարկող երկիր:

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ

15

Բազմապատկենք և հավասարակշռենք համաշխարհային պահանջարկ ունեցող ժամանակակից ապրանքների, ծառայությունների և համակարգերի արտադրության համար անհրաժեշտ բարձր տեխնոլոգիաների և նորարարությունների ուղղակի և անուղղակի առաջարկն ու պահանջարկը:

ՃԱՆԱՉՎԱԾ, ՀԱՐԳՎԱԾ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

16

Ստեղծենք աշխարհում ճանաչված և հարգված հայաստանի գործուն կերպար, զանգվածային կերպով ներգրավենք թիրախային այցելուների, հանրահռչակենք հայկական մշակույթը, գիտական միտքը և քաղաքակրթությունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ 50
20